Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016Թ. ՀՈՒԼԻՍԻ 6-ի ՆԻՍՏԻ
(արձանագրություն N 13)

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում Մանկավարժական պրակտիկայի արդյունավետության բարձրացման մասին ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանի հաղորդումը՝

Գիտական խորհուրդը որոշում է՝

1 Մանկավարժական պրակտիկայի արդյունավետության բարձրացման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. **Հանձնարարել**.

ա) պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին մինչև ս.թ. օգոստոսի 25-ը մշակել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել մանկավարժական պրակտիկայի պաշտպանության ընթացակարգ,

բ) Ֆակուլտետների դեկաններին՝ ապահովել պատշաճ հսկողություն մանկավարժական պրակտիկայի գործընթացի նկատմամբ,

գ) իրավաբանական կենտրոնի ղեկավար Արմեն Ֆերոյանին և պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին՝ սահմանված կարգով ապահովել պրակտիկայի հիմնարկների հետ պայմանագրերի կնքումը,

դ) Ուսումնական գործընթացների կառավարման վարչության պետ Սվետլանա Հովակիմյանին և պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին՝ մինչև ս.թ. սեպտեմբերի 1-ը կազմակերպել պրակտիկայի հիմնարկների հետ համատեղ աշխատաժողով՝ մանկավարժական պրակտիկայի հիմնախնդիրների վերաբերյալ,

ե) մանկավարժական պրակտիկան սպասարկող ամբիոններին՝ պատրաստել մասնագիտական մեթոդական ուղեցույցներ՝ հաշվի առնելով ընդհանուր մեթոդիստի ուղեցույցի, պրակտիկայի առարկայական նկարագրերի պահանջները և մասնագիտության առանձնահատկությունները,

զ) կրթության բարեփոխումների և որակի վարչության պետ Մկրտիչ Ավագյանին՝ ապահովել բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում սովորող բոլոր ուսանողների մուտքը առցանց կրթական համակարգ /google classroom/:

3. **Հաստատել**.

ա) ուսումնական աշխատանքների ծավալների հաշվարկի չափորոշիչներում հետևյալ փոփոխությունները.

1) բակալավրի կրթական ծրագրով նախատեսված երրորդ կուրսի երկրորդ կիսամյակի և չորրորդ կուրսի առաջին կիսամյակի մանկավարժական պրակտիկաների ղեկավարման համար նախկին 12 ժամի փոխարեն հատկացնել 11 ժամ, որից 2 ժամ հատկացնել պրակտիկայի ղեկավարին, 9 ժամ՝ մեթոդիստին:

2) ուսումնաճանաչողական պրակտիկաների մեկ խմբի ղեկավարման համար մեթոդիստին հատկացնել 22 ժամ նախկին 12 ժամի փոխարեն:

բ) մանկավարժական պրակտիկայի թղթապանակը,
գ) մեթոդիստի ուղեցույցը,
դ) պրակտիկայի դիտարկումների մատյանը:

4. Բակալավրի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման ավարտական քննության <<Մանկավարժություն>> և <<Դասավանդման մեթոդիկա>> առարկաների գնահատականը փոխարինել ուսանողի մանկավարժական պրակտիկաների միջին որակական գնահատականով:

5. Բակալավրի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման վերջնական գնահատականը ձևավորել երկու բաղադրիչներով՝ հավասար համամասնությամբ.
ա) ամփոփիչ ավարտական քննության և/կամ դիպլոմային աշխատանքի գնահատականի,
բ) մանկավարժական պրակտիկաների միջին գնահատականի:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ.Միրզախանյան**